ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ավետիք Իսահակյանը, շարունակելով հայ նոր քնարերգության հիմնադիր Մ. Պեշիկթաշլյանի «անթների ու անթառամ բանաստեղծությունների»[1] ոգեղեն լույսի զորությունը և իր ուսուցչապետ Հովհ. Հովհաննիսյանի պոետական խառնվածքի նշանաձողերը, կրակված սրտով ու անհուն սիրով պատկերեց իր հայրենիքի քաջազունների, ֆիդայիների ու նվիրյալների սխրագործությունն ու անձնազոհությունը։ Թվում է Զեյթունի հերոսամարտի (1862) բանաստեղծական հզոր ոգու արծվային ճախրանքն է թևածում Իսահակյանի հայրենասիրական պոեզիայում։

Մեծանուն բանաստեղծը առաջիններից մեկն էր, որ հայ նոր պոեզիան հարստացրեց ազատասիրական և հայրենասիրական ոգեշունչ երգերով, դարձավ «Հայաստանի երգող սիրտը»[2] և իր տարաբախտ ժողովրդի ճակատագիրը դարձրեց սեփական ճակատագիր։ Երբ ուսումնասիրում ես Իսահակյանի ստեղծագործությունները, օրագրերը, նամակները, գրառումները, արխիվային վավերագրերն ու անտիպ նյութերը, հայացքիդ առջև վեր է հառնում ազատության ու հայրենասիրության մեծ երգչի տիտանական կերպարը։ Դեռևս 1894 թ. Իսահակյանը ինքնաքննադատաբար գրել է, որ ինքը շատ է «փչացել-դառել փչացած մարդկության հարազատ որդին. ես ուժ եմ տվել միայն իմ խելքի զարգացմանը, և զգացմունքս մոռացել եմ... Հայաստանում արյան հեղեղ կա— տաճիկը 8—10.000 հայ մարդ է սպանել, կանայք ու աղջիկներ բռնաբարել ու սպանել, մարդկանց կենդանի վառել, 25 գյուղ ավերել... Դազա՜ն, դազա՜ն մարդկություն... Իսկ Եվրոպան ուրախանում է—նա իր շահերի օգուտն է իսկույն տեսնում այդտեղ... ծափահարում է տաճիկին... Իսկ ինչու՞ իմ մեջ չի վառվում վրեժ—ինչու՞ ես այժմ չպիտի կատաղեմ ու դինամիտով վերջ տամ ամբողջ Եվրոպային...»[3]։ 1894—1896 թթ. հայկական ջարդերը, բնաբրանների ու օջախների բռնի զավթումը, տեղահանությունը, արտագաղթը այնպես էին շիկացրել ու խոցել հայ գրողների ու մտավորականների ուղեղը, որ նրանք էլ պատրաստակամ էին և՛ զենքով, և՛ գրչով կռվելու համիդյան բռնակալության դեմ, դառնալու հայրենիքի նվիրյալ, վրիժառու և անձնազոհ մարտիկ։ Իսահակյանը ծրագրում էր գրել «Օրիգինալ դիրք», որի հերոսները պետք է դառնային Քյոռ-օղլին, Գյոքչեցի Ղազարը, Զոփուռի տղերքը, Դավիթն ու Մհերը։ Երիտասարդ բանաստեղծը նույնիսկ ինքն էր զինվորագրվում հայրենիքի ազատարարների բանակին, փորձում դառնալ գերմարդ, հերոս, նվիրյալ։ Այդ բոլորի մասին այնպես հանգամանորեն ու լուսավոր հղացումներով պատմում է նա «Հիշատակարանի» տասնյակ էջերում։

Նախնական մտահղացումների մեջ Իսահակյանը գծում է իր և իր գրքի հերոսների տեսական ու գործնական բոլոր հատկանիշները՝ պահվածքը, իմացությունը, անձնազոհությունը, բնավորության գծերը... «Սոս-հերոս Մանթաշեցի»—ահա՛ իմ հերոսի—իմ անունը»[4]։ Հետագայում, 1897 թ. մայիսի 13-ի գրառման մեջ, թվարկվում են՝ «Դավիթ, Մհեր, Վահագն, Տորք-Անգեղ, Գայլ-

---

1 Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1974, էջ 333—336։

2 «Ավետիք Իսահակյանի մասին», Երևան, 1971, էջ 27։

3 Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 86։

4 Նույն տեղում, էջ 144։

Վահան, Աշոտ-Երկաթ, Կիլիկիայի քաջերից, Քյոռ-օղլի, Դավիթ-բեկ, Աղասի, Գյոքչեցի Ղազար, Զոփուռի տղերք, նոր հերոսներից ու ետ»[5]։ «Նոր հերոսներից» նա նկատի ուներ Աղբյուր Սերոբին, Գևորգ Չաուշին, Անդրանիկին և հայ ազգային-ազատագրական շարժման ուրիշ հերոսների, որոնց պոետը դարձրել է իր բանաստեղծությունների և «Մասսա Մանուկ» վիպասքի հերոսներ։ Իսահակյանը դիմում է առասպելին, բալլադին, լեգենդին, հեքիաթին, այլաբանությանը, տեսիլին ու երազին և դրանց ընձեռած անսահման հնարավորություններով ու ժանրային առանձնահատկություններով կարողանում կերտել դյուցազնական ու ժողովրդական հերոսների կերպարներ, ինչպես նաև փառաբանել հայրենիքի գոյատևման հավերժական արժեքներ։

Լեգենդների ու բալլադների Իսահակյանական մշակման մեջ ուշագրավ երևույթ է «Իգիթ Սարդար» (Զրույց Գալոց օրերից) ստեղծագործությունը, որը գրել է 1894-ին Լայպցիգում։ Աշուղի, Սարդարի, Սանամի և խալխի խոհերի, մտորումների ու ապրումների հիման վրա հյուսված բալլադը այդ օրերին Արևմտահայաստանում ծավալվող ծանր մղձավանջի արձագանքն է։

Հերոսապաշտ Իսահակյանը ցանկանում էր «հերոսներով զարդարել երկրի կուրծքը», «տենչում էր ամենամտերիմ ու սիրելի անձնավորություններից հերոսներ ստեղծել», «ստեղծագործել հերոսներ, տիեզերքներ, արծիվներ, առյուծներ...»։ Եվ ապա՝ «Ես ուզում եմ արծվի պես կանգնել ծովի ափին, ժայռի կրծքին, լեռան գագաթին—երգել խորության, վշտի, մտորմունքի, ոգևորության ու երազների երգեր... ես չեմ ուզում նստել սոխակի պես վարդի թփին ու երգել տարփանքի երգեր, վշտերի ու տարփանքի արցունքներ... Ես ուզում եմ արծիվ լինել, ես չեմ ուզում սոխակ լինել—ես հերոս եմ...»[6]։ Բանաստեղծի երազները, անուրջները ու ցնորքները դիպչում էին կապարե իրականությանը, թաթախվում հայկական ջարդերի արյան ծովում, փշրվում կամ ստանում արյան շառագույնը։ Նա փորձում էր «ապագա հյուսել, աշխարհ ստեղծել», մինչդեռ բանաստեղծության սովորական սահմաններն ու ձևերը չէին բավարարում, նա լիաբերան ու լիարժեք չէր կարող ասել ցավագին ճշմարտությունը, ներկայացնել իր ծրագրերն ու գործողությունները... բանտն ու աքսորը պատրաստ էին... Ու հաճախ, երբ դիմում էր առասպելին, այլաբանությանը, տեսիլին, երազին, բալլադին և լեգենդին, նա փորձում էր իրեն ու իր ժողովրդին հուզող հարցերի մասին խոսել առանց կոնկրետ անունների ու իրական փաստերի, խոսել փիլիսոփայորեն, մի վերին անիմանալի լեզվով, շատ անգամ էլ՝ այլաբանորեն, բնության ու տիեզերքի երևույթներով շնչավորված ու իմաստավորված։ Երբեմն էլ վկայակոչվում են հեթանոսական-ասպետական ժամանակների ազատության ոգիներն ու քաջազուն մարդիկ՝ նոր ժամանակների հերոսներին ոգեշնչելու, պայքարի տանելու ու ցանկալի աշխարհ կառուցելու համար։ «Հի՜ն աշխարհ, խորհրդավոր աշխարհ, մթնոտ ու պայծառ աշխարհ, հրաշալի ու սքանչելի աշխարհ... խորը և անքննելի աշխարհի <մարդիկ>։ Դուք մեզ պես թույլ, վախկոտ, տուփոտ, քնքուշ չէիք. դուք քա՛ջ էիք, ամո՛ւր, ահե՛ղ, հսկա՛. երկիրը ձեր ոտքերի տակ դողում էր, իսկ երկինքը ձեր գլխի վրա պսակի պես շողում... Ջարթնեցե՛ք դուք ձեր գերեզմաններից, թող ձեր ուժը փռվի մեր վրա, ձեր խորհրդավորությունն ու ձեր ձգտումները, ձեր կրակն ու բոցը թող մեզ տիրե, տաքացնե։ Հի՜ն աշխարհ, փարթամ, հսկա, ահռելի աշխարհ...»[7]։ Հեթանոսական այս պոռթկումները, առնական ուժի ու հզորության, ազատ կյանքի ու վայելչության փառաբանումներն ու ոգեկոչումները նորարար բանաստեղծի խիզախումներն էին, որոնց ուժգին արձագանքները տասնհինգ տարի հետո լսվեցին արևմտահայ պոեզիայում, դարձան տիրապետող արվեստ՝ «հեթանոսական հոսանք» մկրտությամբ։ Ավելին, Իսահակյանը այն բացառիկներից էր, որ ոգեկոչեց վաղն-

5 Նույն տեղում, էջ 235։
6 Նույն տեղում, էջ 164։
7 Նույն տեղում, էջ 231։

չական ժամանակների հզոր ոգիների Ուժը, Զորությունը, Քաջությունը, Կրակն ու Բոցը՝ իր օրերի քաղքենիական, թուլամորթ ու վախկոտ միջավայրը քընանդատելու, նորօրյա հերոսներին զինելու, գոտեպնդելու համար։ Նա չիդեալականացրեց հին աստվածներին ու նրանց չդարձրեց գրական հերոսներ, ինչպես ուրիշները։ Աստվածային ու առասպելական դյուցազունների ծագումնաբանական հրաշքը նա հայտնաբերեց Ազատն Մասսի՝ իր հայրենիքի ներքին ժայթքումից, այդ օրերի ժողովրդական առյուծատիպ հերոսների անօրինակ սխրանքներից ու մեր մեծ էպոսի անմահ կերտվածքից։

Իսահակյանը 1895—1898 թթ. գրել է «Մասսա Մանուկ»[8] վիպասքը, որի առաջին տարբերակն ունի «Դև-Սուլթանն ու Մասսա Մանուկը» խորագիրը։ Հետագայում (1908 թ.) վերամշակել է, հաճախ անդրադարձել այդ ծավալուն գործին (4000 տող է), սակայն մնացել է անավարտ։ Հեղինակի մտահղացմամբ «Մասսա Մանուկը» պետք է լիներ հայ ազգային-ազատագրական շարժման էպոսը, Սասունի դյուցազունների շարքը լրացներ նորօրյա հերոսներով։ Այդ պոեմը հայ դյուցազներգության այն սքանչելի էջերից է, ուր հայրենասիրական բուռն պաթոսով, ջիկացած զգացումներով ու հրեղեն խոսքերով փառաբանված են հերոսությունը, ազատությունը, իրավունքը, աշխատանքն ու ստեղծագործ ոգին։ Հիանալի են օգտագործված «Սասունցի Դավիթ» էպոսի ավանդույթները, մի նոր ուժով ու հմայքով են ներկայացված էպոսային թարմ մտածողությունը, արտահայտչամիջոցները։ «Մասսա Մանուկ» վիպասքը կատարյալ հրավառություն է, Իսահակյանի տաղանդի մի նոր փայլատակում։ Վիպասքի այն հատվածները, որոնք մեր օրերում առաջին անգամ են տպագրվել, մեզ հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու նրա գաղափարական ու գեղարվեստական ակնհայտ արժանիքների մասին։

Արևմտահայ գյուղացին իր բնօրրանում զբաղված էր խաղաղ աշխատանքով, բերք ու բարիքի արարումով... Ի՞նչ պետք է աներ նա, երբ հաճախակի բռնադատվում էին նրա իրավունքները, գերեվարում, մորթում նրա հարազատներին, գլխատում հիմնական ուժը, դժոխքի վերածում հայոց հին օջախը։ Զինավառ հայ գյուղացու համար հայրենի լեռներն անկողին էին, քարերը՝ բարձ, նրա զավակը երդվում էր՝ չքնել, չամուսնանալ, զոհվել, բայց փրկել հայրենիքը, հարազատներին։ Հայ ժողովրդական հերոսները՝ սարերում թառած արծիվ-ֆիդայիները, դարձել էին ցասում, դարձել վրեժ ու բռնցքվել լեռների խորքում։ Պատկերավոր է գրել այդ մասին Իսահակյանը. «էն սև ամպն է իմ ծարավս կոտրել, էն սև առյուծն է ինձ կաթ տվել, անտառի ճյուղերն են իմ օրորոցը եղել, ժայռի կուրծքը՝ իմ բարձը։—Ո՞վ կարող է պարել ինձ պես՝ հողմի, մրրիկի հետ պարել»[9]։ Արորին, ստեղծարար խոփին փոխարինում էր փրկարար զենքը, ժայռեղեն բարձունքներից լսվում հայ ֆիդայիների առյուծային մռնչոցը, թշնամու վրա տարածվում դյուցազնական հերոսների արծվային սարսափը։ Ազգային-ազատագրական շարժման մեջ գյուղացիների վճռական ուժը դարերի փորձ ունի։ Վ. Ի. Լենինը «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» աշխատության մեջ նկատել է, որ գյուղացիությունը, «որպես բնակչության ամենից ավելի թվաշատ և ամենից ավելի «ծանրաշարժ» խավի», ավելի ակտիվորեն է ներգրավվում ազգային «շարժումների մեջ՝ ընդհանրապես քաղաքական ազատության և մասնավորապես ազգության իրավունքների համար մղվող պայքարի կապակցությամբ»[10]։

Անցյալ դարավերջին և 900-ականի սկզբներին Իսահակյանը հայկական մամուլում տպագրել է բազմաթիվ հայրենասիրական բանաստեղծություններ։ Դրանք հայրենիքի ազատությանը, անկախությանը և նրա մեծ սիրուն անմնացորդ նվիրված հայ քաջազունների գովքն են՝ կերտված բանաստեղծական շքեղ

---

8 Առանձին հատվածներ տպագրվել են 1920-ին՝ Ա. Զոպանյանի «Վերածնունդ» շաբաթաթերթում՝ «Հատվածներ պոեմայից» խորագրով, 1974-ին 6 հատորյակի 2-րդ հատորում՝ «Մասսա Մանուկ» (հատվածներ անտիպ վիպասքից), էջ 110—156։

9 Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 205։

10 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 25, էջ 317։

տաղանդով։ Հայրենիքի համար քաջաբար ընկած նահատակների արյան գույները փոխակերպվեցին բանաստեղծական մրրկալից ու գիշերադեմ պատկերների՝ Սիամանթոյի, Վարուժանի և ուրիշների հայկական ջարդերին նվիրված ստեղծագործություններում։ Եվ գեղարվեստորեն ստեղծվեցին ապստամբ, ըմբոստ, դյուցազնական կերպարներ, փառաբանվեցին սուրը, հերոսությունը, նվիրվածությունը և հայրենասիրությունը։

Հայրենիքին, հայոց ազատամարտին և նրա հերոսներին նվիրված Իսահակյանի բանաստեղծությունների մի զգալի մասը «Հայ-գուսան» ստորագրությամբ հրապարակվել է հիմնականում «Դրոշակում», 1899—1902 թվականներին։ «Հայդուկի երգերից» ընդհանուր խորագրով այդ բանաստեղծությունների արվեստի ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկը երաժշտականությունն է։ Ժողովրդական մտածողության պարզ, զուլալ ու անկեղծ պատկերներում, ինչպես արևի հրացոլքում, արտացոլվում են հայ քաջորդիների շիկացած զգացումները, սրտերի զարկերը և հոգեկան կանչերը։ Քայլերգային, ռիթմիկ, խրոխտ ու առնական ակորդներին փոխարինում են էլեգիական թախիծով լեցուն, հուզաշաղախ մեղեդիները, վաղնջական ժամանակներից եկող հայրենական-հերոսական ոգեկոչումները՝ լուսապայծառ շեշտերով ու զրնգուն ձայներով։

Հայրենիքի ու մոր սուրբ սիրով լցված հերոսի պայծառ կերպարն է գրծված «Ազիզ մերիկ, քեզի թողի» (1899) բանաստեղծության մեջ։ Աշխույժ, ոգևորիչ պատկերներում ցոլանում են հայ մարդու նվիրվածությունն ու անձնազոհությունը, «դուման սարեր, դարդլու սարեր» ունեցող հայրենիքին, «առյուծի պես հայ ախպրտանքին» ուղղված ռազմի կոչը՝ թշնամուն հաղթելու համար։ Բանաստեղծության երկրորդ քառատողում («Էյ, Սիս-Մասիս, ձեզի մեռնիմ») օգտագործված է «Մասսա Մանուկ» վիպասքի առասպելական հերոսի խոսքը՝ մեծ կռվից առաջ[11]։

Մեկ սիրտ դառնանք, բյուր սուր դառնանք,
Ջարդենք, փշրենք դուշմընին,
Ջա՛ն, տղերք, ջան, զարկենք, զարկվինք
Մեր-վաթանի ուղուրին...

«Հայդուկի երգերից» հաջորդ բանաստեղծությունը՝ «Հազա՜ր բարով, հպարտ սարե՜ր» II, (1900), բերում է հայրենիքի նվիրյալի ջինջ սերը բնաշխարհի ու մարդկանց նկատմամբ։ Արծիվ-զինակիցների ձայնն է լսել նա և արծվային թռիչքով էլ սլանում է դեպի հպարտ, հայրենիքի անսասան զորությունը խորհրդանշող սարերը՝ արտահայտելու իր անմար կարոտն ու սերը.

Հազար ձենով, հազար սրտով
Արծիվների հետ կուզամ.
Հոգի՛դ մեռնիմ հազար սրտով,
Իմ հայրենի՛ք, մերիկ ջա՜ն...

Երրորդ երգը՝ «Ինձ տեղ տվեք, Սիփան սարե՜ր» III, (1900), թվում է ազատության հիմն է՝ երաժշտական հզոր ու առնական ռիթմերով, ազատ ու երջանիկ կյանքի վեհացումներով ու պանծացումներով։ Թոթափելով բռնակալի կապանքները և արյան գնով ձեռք բերելով իր ազատությունը, մարտիկը Սիփան սարին է ապավինում իր փրկված կյանքը և բացում ազատության մեծարման ծես.

Մասսից ազա՛տ, Մասսից բա՜ռձր ես,
Աշխարհից բանկ. ազատությա՜ն,
Կյանքի սերն ես, կյանքի տերն ես.
Արծրվի պես բա՜ռձր ես թռնում։

---

11 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ), հ. 2, Երևան, 1974, էջ 137—138։

Ազատ, անկաշկանդ ու հոգեկան բարձր տրամադրությամբ ապրող հերոսը կսավառնի իր «ախպրտանց» մոտ, կազատի նրանց «ժանգ շղթաներից», իրարով զորացած ու իրարով լցված կերգեն ազատության ու անկախության երգեր.

Ազատությո՛ւն, ազատությո՛ւն,
Կյանքի արև՛, ազատություն,
Մասսից ազա՛տ, արձրվից ազա՛տ,
Աշխարհի տե՛ր ազատություն:

Արձրվի պես բա՛րձր ես թռնում,
Մասսից բա՛րձր ազատություն,
Դո՛ւ, կյանքից վե՛ր, դու, լո՛ւյս-արև,
Ազատությո՛ւն, ազատությո՛ւն...

Ազատ ու խաղաղ կյանքը կարելի է պահպանել միմիայն սեփական բազուկների ու զինված պայքարի շնորհիվ։ Սուրը, հրացանը, ոումբը դարձել էին զինավառ մարտիկների պաշտամունքի ու սիրո առարկաները, որոնք նրանց հրաշեկ զգացումների մեջ աստվածացվում են, դառնում «սրտի տերը», անգին ու հավատարիմ ընկերը, նրանք սիրած աղջկա փոխարեն հրացանն են «բոց կարոտով» գրկում, սեղմում կրծքին։ Թշնամու դեմ ահեղ կռվի գնալիս հրացանն է նրան ուժ ու զորություն տալիս, նրանով է նա «փնչում, որոտում վրեժ...»։ Իսկ անմահության ճանապարհին, երբ մարտում ընկնի հերոսի մահով, թող իր ընկերները այդ հրացանով փոս փորեն, նրան էլ իր հետ թաղեն՝ որպես իր հարս, որպես համատեղ զոհի «աննենգ ընկեր»։ Դաժան է հայ տղամարդուն բաժին ընկած կյանքի ճանապարհը. մարդկային ջերմ սիրո ու երջանկության վայելքի փոխարեն զինավառության ու անձնազոհության այսպիսի ծանր երազանք («Ուրբ ես մեծացա, տղամարդ դարձա», «Հայդուկի երգերից» IV, 1900)։

Բանաստեղծական հղացման գաղափարաբանական այս լիցքավորումը դալիս էր ժամանակի շիկացած մթնոլորտից, մասնավորապես Սասունի և մյուս գավառների հերոսապատումից։ Կարծես հազարավոր նահատակների արյան մրրիկն էր փոթորկել սկզբում Իսահակյանին, քիչ անց Սիամանթոյին՝ վերըստին դիմելու զենքի փառաբանությանը, քաջակորով հայորդիների սխրանքներին ու մահացածների անմահությանը։ Ժողովրդին զինելու բուն նպատակը, անշուշտ, դաժան ռեժիմի դեմ պայքարելն էր։

Հեռավոր Ջյուսնախտում (Շվեյցարիա) Իսահակյանը գրել է «Սալնո ձորերում, կռվի ձորերում» («Հայդուկի երգերից» V, 1900)[12] բանաստեղծությունը, որը հայդուկյան երգերից ամենից սրտակեղեքն ու ցնցողն է՝ հեղինակային ողբերգական խոսքի լիցքավորումով։ Նախորդ բանաստեղծությունները գրված են առաջին դեմքով, ֆիդայական պարզ, ժողովրդական մտածողության բացառիկ երանգներով։ Դա հնարավորություն է տվել հեղինակին պարզ ձևերի մեջ դնել ըմբոստ ու վրիժառու հոգիների կյանքի հուզիչ դրվագների պատումները, նրանց անմիջական զգացումներն ու տենչերը։ Իսկ այստեղ հանդես է գալիս բանաստեղծը՝ նույնքան հոգեհարազատ մնալով հայդուկյան բոլոր տրամադրություններին։ Ժողովրդական հերոսի քաջարի մահը[13] փոթոր-

12 Ավ. Իսահակյան, եժ, հ. 1, Երևան, 1973, էջ 136։

13 Հերոսական կռիվներով աչքի ընկած Սալնո ձորը տվել է շատ դյուցազուններ, տասնյակ հայդուկներ են անմահացել այդ հողի վրա։ Նրանց հավաքական կերպարի բանաստեղծական պատկերումը Իսահակյանի կողմից հասկանալի է։ Մինչդեռ, մեր կարծիքով, բանաստեղծի կոնկրետ հղացման հիմքը եղել է Սալնո ձորի ողբերգական կորուստներից մեկի՝ քաջարի Հակոբ Վարդանյանի (Ճարտար, Մուրատխան) սպանվելը։ Վերջինս իր 66 հայդուկներով 1897-ին անցել է Խլաթը և Նեմրութի գագաթին զենք հանձնել իր հորեղբորորդուն՝ Աղբյուր Սերոբին և Գուրգենին, բացել մեծ զինահանդես... Հայտնի է նրա քաջերի դյուցազնական կռիվը Այնթափի դաշտից մինչև Խլաթ (1898) և եղբոր՝ ռես Մխոյի կորուստը։ Նույն տարվա նոյեմբերին քաջարի Հակոբն ընկավ Ջրհոր գյուղում պաշարման մեջ՝ «մեռավ իբրև քաջ հայդուկ՝ 4 զինվոր սպանելե վերջ» (տե՛ս «Դրոշակ», 1901, № 6, էջ 107—108)։

կել է բանաստեղծին, բայց նա ներքին այրումներով, շիկացած զգացմունքների առնական սանձումով է ներկայացնում կատարվածի ահավորությունը.

Սալնո ձորերում, կըռվի ձորերում
Հայդուկն է ընկել խոր վերքը սըրտին,—
Վերքը վարդի պես բացված կարմըրուն,
Ու ձեռքն է գցել կոտրած հրացանին:

Արնոտ դաշտերում ծըղրիդն է ծըղրում,
Հայդուկն է ընկել մահվան խոր քընով.
Հայդուկը հոգում երազ է տեսնում,—
Հայրենի աշխարհն ազա՛տ, ապահո՛վ...

Հայրենիքի ազատության ու անկախության համար կյանք տված կտրիճի հոգում գծագրվում են վերջին երազները՝ լուսավոր, ապագայի վառվռուն պատկերներով: Պայծառ երազի ու դաժան իրականության տեսիլները ունեն ցավագին ու ցնցող հնչերանգներ.

Տեսնում է... արտում հովն է շընկշընկում,
Փայլուն գերանդին զընգում է անո՛ւշ.
Ու փոցխ են քաշում սիրուն աղջըկունք՝
Հայդուկի վրա երգելով անո՜ւշ...

Սալնո ձորերում ամպերն են անցնում,
Հայդուկի վրա արծիվն է գալիս.
Ա՜խ, սև աչերը արծիվն է հանում.
Հայդուկի վրա ամպերն են լալիս...

Միայն վեհ ազատության սերը չէ, որ փոթորկել է հայդուկին: Ավերված հայ օջախների ու հարազատներին կորցրած հայրենիքի զինվորը կռվի է գնում «Հրեղեն ուխը» և «անհատակ վրեժը» սրտում, երազում լինել «մռայլ Տավրոսի ճակատից վիժած կայծակ-հրաքուխ» և շանթելու, փշրելու «թշնամու կուրծքը չար, արյունախանձ...»: Եղիշեական անշեջ պատգամն է վառվում նրա հոգում, չարին հակառակվելու պաթոսը, արդար ու ազնիվ վրեժի ցասումը («Վեհ ազատության սերը չէ մենակ», 1900):

—Ու ռա՛մբ է սիրտս, և պիտի պայթի,
Թշնամու գլխուն նա՛ պիտի պայթի...

«Ճամբես արյունի հետք թողեր, կերթա» («Հայդուկի երգերից» VI, 1900), բանաստեղծության տողերում հորձանք են տալիս ողբերգական պատկերները, անձնուրաց կյանքին հրաժեշտ տալու անողոք հառաչները: Արյունոտ ճամփեն, նինգ օձը, սև ագռավները, որոնք խորհրդանշում են զազրելի թշնամու գործողությունները, ուղեկցում են նրան մահվան ճանապարհին... Հայդուկի երազները անկատար են մնացել, իղձերն ու տենչերը՝ կիսատ: Բայց դեպի անմահություն գնացող կտրիճի համար հարազատներին ու ընկերներին ուղղված հրաժեշտը մրրկալից զգացումների սրտառուչ նկարագիր է.

Է՛հ, մնաք բա՜րև, մեր դա՜շտ ու սարե՜ր,
Ուր քոլ ու քարդ մեր արնով ներկվավ.
Ինձ էլ չես տեսնի, իմ խեղճ, ազիզ մե՛ր,
Ու գերեզմանս էլ չես գտնի բնավ:

Կարմիր օրերի անգին ընկերնե՜ր,
Իմ տեղս պահե՛ք, երբ գաք իրար քով.
Ա՜խ, յարիս ասեք, որ ես է՛լ չկամ,
Որ լա՛, վրես լա՛ անուշ աչքերով...

Նույն ժամանակ էլ Իսահակյանը արարել է իր հայրենասիրական երգերից մի ուրիշ սքանչելիք՝ «Է՜յ, ջան-հայրենիք, ինչքա՜ն սիրուն ես»[14]: Հայրենա-

[14] *Ավ. Իսահակյան, Եժ, հ. 1, էջ 126:*

սիրական հորդաբուխ զգացումները, սիրո և նվիրվածության պանծացումները մի նոր վեհություն են հաղորդում ազատ հայրենիքի բաղձանքներին, ընթերցողին վարակում լուսավոր տրամադրություններով։ Փառաբանելով սիրուն հայրենիքի երկնի մովի մեջ կորած սարերը, անուշ հովերն ու ջրերը, Իսահակյանը չի մոռանում ժողովրդի ողբերգությունը՝ «մենակ բալեքդ արուն-ծովի մեջ» թանձր բնութագրումով։ Ժողովրդական զուլալ ակունքներից եկող նվիրվածության հավաստիացումները, հայրենիքի նկատմամբ տածվող անզուգական սերը նվիրյալ բանաստեղծի արարչագործության առհավատչյան են։

Հայոց դատի, ազատության ու անկախության համար ընկած մարտիկների հիշատակին նվիրված բանաստեղծական պատկերներում կորստի ցավագին հառաչներին ուղեկցում են հայրենի երկրի փրկության անկատար երազները։ 1896-ի ապրիլի 24-ին կատարված գրառման մեջ Իսահակյանը, խորապես հիասթափված կյանքից և վերապրելով ընկերների ու հարազատների կորուստը, գրել է. «Հիվանդություն, մահ, երկյուղ, սարսափ, սով, քաղց... Մեռավ Մուշեղը, մեռավ Գաբո Ուրեկլյանը, մեռավ պաշտելի Ավոն... Մարդիկ, անտարբեր, անզգաս, եսական... թքի՛ր կյանքի վրա և մեռիր... Ա՜խ, Ավո՛, Ավո՛-ես սիրում եմ քեզ, պաշտում եմ քեզ...»[15]։ «Պաշտելի Ավոյի»՝ Ավետիք Մալոյանի և մյուս նահատակների սերը հավերժ մնաց Իսահակյանի հոգում։ Բանաստեղծը մոտիկից ճանաչել է իր հայրենի քաղաքի ուսուցիչ Ավետիք Մալոյանին, որն իր 32 տարեկան կյանքը նվիրաբերեց Արևմտահայաստանի ազատագրությանը՝ անիրագործելի թողնելով իր ծրագրերն ու երազանքները։ Վերը նշված գրառումից մեկ շաբաթ հետո Իսահակյանը գրել է. «Դու մի օր, քու անհայտանալուց մոտ մի ամիս առաջ[16], ինձ ասացիր, իմ պաշտելի՛ ընկեր.—«Ստեղծի՛ր մի այնպիսի վեհ և բարձր աշխարհ, որ մարդ կյանքի կեղտից ու աղմուկից հետո գոնե նրա մեջ մխիթարվի ու մաքրվի.—ստեղծի՛ր մի գեղեցիկ բանաստեղծություն»։ Եվ ես կատարում եմ քո կտակը, իմ մոռացված, անհայտացած ընկեր, սո՛ւրբ է քո հիշատակը ինձ համար, որովհետև դու ինքդ սուրբ էիր, և քո կտակը, քո պաշտելի անվանն եմ նվիրում, ո՛վ սուրբ ոգի... Երեկ մեռար, և մինչև այսօր անթիվ դարեր են անցել քեզնից հետո...»[17]։ Ավետիք Մալոյանի հիշատակին նվիրված Հայ-գուսանի երգը հնչում է որպես հավերժ հարգանքի ու նվիրվածության սրտաուռուչ խոսք։ Ողբերգական կյանքի տեսիլային պատկերները ներկայացվում են արծվային ուժի զուգահեռով, մարդկային ջերմ սրտի բաբախումներով։

Համատարած մահերի ու ավերի երկրում, ուր «գարուն չկա հայի համար» «վերքը սրտին՝ հողի տակ» պառկած անմահներից մեկի՝ Գուրգենի[18]

---

15 Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 227։

16 «Խոսքը Ավետիք Մալոյանին է վերաբերվում, որ Արևմտյան Հայաստանի սահմանն անցնելիս բքախեղդ է եղել» (տե՛ս «Հիշատակարան», էջ 458)։ Սխալ է ծանոթագրված։ Ավետիք Մալոյանը ոչ թե բքախեղդ է եղել, այլ նրան տանջամահ են արել և սպանել սահմանագլխի զինվորները՝ քրդերի օգնությամբ։ «Հայրենյաց սուրբ գործի քաջարի զինվորը», չնայած ընկերների խնդրանքին, փորձում է գիշերով, հաշվի չառնելով անձրևը, բուքը, անցնել սահմանը, ժամ առաջ լինել տաճկահայերի մոտ։ Կյանքում ոչ մի վտանգի առաջ չընկճված հերոսն իր երկու ընկերներով ուժասպառ եղած չեն կարողանում շարունակել ճանապարհը։ «Լուսաբացին նկատում են քրդերը և զինվորների օգնությամբ ձերբակալում են նրան իր երկու ընկերների հետ և կողոպտելուց հետո՝ հրացանը հետը տանում են սահմանապահ զորքի հրամանատարի մոտ։—Այստեղ անգութ բռնակալները սաստիկ ծեծի տակ մահացնում են նրա։ Դիակը հանձնում են նույն Ղարաքիլիսա գյուղի հայ խանութպանին, որը մի փոս փորելով թաղում է նրան իր բոլոր հույս ու վառ ցանկությունների հետ, իսկ երկու ընկերներին բանտարկում են» (տե՛ս «Դրոշակ», 1896, 15 նոյեմբերի (26), էջ 192)։

17 Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 230։

18 Գուրգեն Ագուլիսցի (Բաղդասար Մալեյանց) (1878—1899), Տարոնի հայտնի նվիրյալներից մեկը, որն իր խմբի հետ հերոսաբար ընկավ 1899-ի ապրիլի 24-ին, Մուշից քիչ հեռու, Ցրոնք գյուղում։

երազանքն էր հայ ժողովրդի միասնական զինված պայքարը անարգ թշնամու դեմ։ Դողթնցի 26 տարեկան երիտասարդը մատնությամբ նահատակվեց՝ մինչև վերջ ցույց տալով հերոսական օրինակ, իր կյանքը նվիրաբերելով Մշո ազատության վեհ դատին։ «Գուրգենի անմահ հիշատակին» (1899, ապրիլ—1900, ապրիլ, տարեդարձին) ոտանավորի տողերում թրթռում են հայրենաբաղձ զգացումները, բանաստեղծական հուզիչ խոսքի թախծոտ մեղեդիները.

...Դնա՛, ծիծեռ... բո՛ղ ինձ մենակ՝
Վերմը սրտիս՝ ճողի տակ...

Բայց երբ տեսնես թշնամու դեմ
Հայ ժողովուրդ սարի պես
Ձեռքը ձեռին ճպարտ կանգնած,
Հայե՛ր, լեռնե՛ր իրար պե՛ս,—

Ա՜խ, այն օրը, արի՛, ծլվտ՛,
Գարնան զալը նո՛ր կանչե.—
Հայո՛ց գարնան, որ բյո՛ւր բարև
Սիրտս խրեն դողանչե...

Հայ ժողովրդական փառաբանված հերոս, «Տարոնի առյուծ» Աղբյուր Սերոբը անցյալ դարի 90-ականի այն դյուցազուններից էր, որին սիրում էին բոլորը, երգեր հորինում նրա մասին։ Ինչպես ֆիդայական մյուս հերոսներին, այնպես էլ Սերոբին կարողացավ հաղթել «ամենազորեղ զենքը»՝ մատնությունը։ Լեգենդար հերոսի, նրա սիրելի հարազատների՝ 12-ամյա տղայի՝ Հակոբի և եղբայրների եղերական վախճանից հետո ցնցվեց ժողովուրդը, ողբաց նրանց մահը, վերստին հորինեց սրտառուչ երգեր։ Հերոսի հիշատակին բանաստեղծություն նվիրեց նաև Ավ. Իսահակյանը։ Ընտրված է խիստ բնութագրական բնաբան. «...Այսպես վերջացավ մեծ հիացում ու մեծ սարսափ ներշնչող Սերոբ-Փաշան, ազատության ծարավի, իդեալով տոգորված, միշտ լավին ձգտող մի բնավորություն... (Դ-ր Վ. Բէլք)»։ Գողթան երգերից սկսած մինչև հայոց առասպելն ու էպոսը շունչ ու ոգի են տվել «Սերոբի հիշատակին» բանաստեղծությանը։ Հայ-գուսանը կրակված սրտով հրաշակերտել է մեր դյուցազներգության մի պայծառ էջը, մի նոր ուժով բորբոքել հայ վրիժառուների հայրենասիրական կրակը։ Իսահակյանի հերոսապաշտության իդեալն էլ իր ներքին հրաբխային ժայթքումով արարել է այնպիսի մի ձուլվածք, որն իր ասքային հետաքրքիր հյուսվածքով ու շողարձակ գույների փայլով գրական մնայուն արժեքներից է։ Բարձրիկ Նեմրութի ոսկե դագաթը Վանա ծովի մեջ «վառ-վառ» շողում է. այդպես էլ քաջ Սերոբ-Փաշայի «ազիզ անունը» ժողովրդի սրտումն է փայլում։ Նրա սխրանքների գովքն էլ ջինջ աղբյուրի նման թո՛ղ հոսի Գուսանի «անզարդ երգերում»... Ու Նեմրութի բոլոր ակներից դուրս եկող անապական ջրերը հոսում են դեպի Մշո դաշտը, միայն «Աղբյուրի աղբյուրը... խեղճ ժողովրդի սրտին մեջ կերթա—ազատ օրերի, դալար օրերի ծարավ վաթանի սրտի մեջ կերթա...»։ Առանձին բառերի նպատակային փոփոխություններով վեցնյակի կրկնելը արված է գիտակցաբար։ Իսահակյանը մեկ անգամ ևս ընդգծում է ժողովրդի և նրա հերոսի փոխադարձ սերը, ֆիդայիների զորանալը Աղբյուրի «հավերժահոս ջրից» ու նրա անձնուրաց պայքարի ոգեկոչումներից։ Սարերի արքան՝ Արծիվը, նստել է Նեմրութ լեռան ժայռերի վրա, գահի վրա, կտուցի մեջ մի սիրտ է բռնել, բարձր, դիլ կանչում է, ձայն է տալիս բոլորին.

—է՛յ, ականջ արե՛ք, ճավե՛ր ու ճավքե՛ր,
Կարին Սերոբի սիրտն է կրտցիս մեջ,—
է՛յ, ականջ արե՛ք, սարե՛ր ու ձորե՛ր,
Սիրտը, որ ձեզնեն բարձրանց կերթաներ։
Սերոբ-Փաշայի սիրտն է կրտցիս մեջ,
Սիրտը, որ ձեզնեն մեծ էր ու խորն էր։

Ու արծվային մտքի ճախրանքով էլ պատմվում են ժողովրդի կողմից սրբացված հերոսի քաջագործություններն ու խիզախումները։ Հայ-գուսանի հինավուրց բամբիռի լարերը մերթ պրկվում են, հնչում առնական ու խրոխտ, ցասումով ու վրեժով, մերթ էլ հերոսի սիրով լցված՝ քնքշանում, պայծառանում։ Երբ Նեմրութ սարից նա հեղեղի նման իջնում էր «վախկոտ, նամարդ» թշնամու վրա, վերջինս փախչում էր սարսափից, չէր կարող «ճակատ առ ճակատ» կռվել։ Նրա շվաքը տեսնում, «յոթը ծակ էին մտնում»։ Մինչդեռ նենգությամբ, մատնությամբ ու խարդավանքով թշնամին հաղթեց։

Հերոսապաշտությունը Իսահակյանի էությունն էր, ոչ կեցվածքը։ Նրա արյան ու հոգու մեջ էլ դա շարունակվեց մինչև «Սիրելի հերոս Ս. Գ. Զաքիյանի անմահ հիշատակին» (1942) նվիրված սքանչելիքը, մինչև իր կյանքի վերջերին գրած «Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել» (1955) երգաշնչին տեսիլը։ Սիրելի հերոսների կորուստը և ազգային աղետների պատճառած վիշտը ցնցում էին նրան, դարձնում ողբերգու, բայրոնյան տիպի մեծ վշտակիր։

Լուռ գիշերին բանաստեղծի «մտքի դիմաց շատ ստվերներ» են հավաքվում, դրանք բանաստեղծի ընկերներն են՝ «մեռած, կորած», բայց հարազատ ու հոգեմոտ։

...Նրանց աչքերն՝ բաց ու վրեժ
Սրտիս խորքը նայեցին.
Սիրտս բաց էր խոր վերքի պես,—

Անհավասար, զոռ կռվի մեջ
Ընկած, իմ վեհ ընկերներ.
Ա՜խ, ձեր ջիրիմն իմ սրտումն է,
Իմ վե՛ճ, իմ սո՛ւրբ ընկերներ...

Անանուն հերոսների, հայրենիքի նվիրյալների ու մահացած անմահների մասին գրված բանաստեղծություններին երբեմն էլ ուղեկցում են ֆիդայական շարժման կոնկրետ անձնավորություններին նվիրված երգեր, որոնցից մի մասին անդրադարձանք վերևում։ Իսահակյանն իրական դեպքերին ու դեմքերին վերաբերող երևույթները անց է կացնում իր բանաստեղծական հոգու քուրայով, գեղարվեստորեն կերպավորում, ընդհանրացնում է և ընթերցողին հանձնում իր հայրենասիրական կրակված սրտի բաբախները։ Հայտնի է, որ «դարասկզբին Սև Քարեցի հռչակավոր Սաքոն Արևմտյան Հայաստան գնալուց առաջ, հայ ժողովրդի ազատագրության համար կռվելու ու նահատակվելու երդում է տվել Գոշավանքում», կատարել տասնյակ քաջագործություններ ու խիզախություններ։ Ահա նրան՝ ձոնած Իսահակյանի երգի քառատողը.

Օրհասի առաջ, կուռ զեղաններում
Կրծքից չկախվեց գլուխդ երբեք...
Դու զուլալ աղբյուր, դու ոսկի աստղիկ,
Դու երազ էիր սուրբ ազատության[19]։

Բանաստեղծը դարասկզբին նույնպես տենչում էր երգել իր հայրենի «երկնի հետ խոսող» վիթխարի լեռները, արծվի թևածումը վեհ բարձունքներում, մայր ժողովրդի ազատությունը, նրա անձնուրաց հերոսների վեհ գործերը։ Մինչդեռ նրա ըղձանքներին ու տենչերին կապանք էին դրել բիրտ ու կոպիտ ուժերը, փշրել սրտի քնարը...

Հայ կարիճներին երգել կուզեի
Եվ կռվի կոչը՝ ճպարտ ու վայրի,
Սուրբ ազատության տոնը ճաղատան
Եվ վառ ապագան իմ ճայրենիքի։

---

19 Ս. Խանզադյան, Հայրենապատում, հ. Գ, Երևան, 1984, էջ 174։

Դարասկզբին Ավ. Իսահակյանը լցված էր հայրենանվեր գործեր կատարելու մեծ եռանգով, ուներ վառ երազներ ու բազում ծրագրեր։ Ու այդ տարիներին էլ նրա պոեզիայում առնական ու հզոր ռիթմերով լսվում են Ազատության Զանգի երկնասույզ զոզանջները, ազատության հաղթական տոնին ու հայրենիքի պայծառ ապագային նա բերում է իր նոր ազատասիրական երգերը, գովերգում գալիք արշալույսները։

ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА В ЛИРИКЕ АВ. ИСААКЯНА

АВАК ХАЧАТРЯН

Резюме

Аветик Исаакян—один из первых поэтов, обогативших новую армянскую поэзию патриотическими и свободолюбивыми песнями.

В 1899—1902 гг. А. Исаакяном был написан целый ряд патриотических стихотворений. Они посвящены в основном национально-освободительной борьбе армянского народа и ее героям. Стихи имеют несомненную ценность и важное значение для исааксяноведения.